ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 20/19

13.12.2019թ. ք. Երևան

ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (նախագահող դատավոր՝ Հ. Ավագյան) (այսուհետ՝ Դատարան) 2019 թվականի հոկտեմբերի 7-ի որոշմամբ դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ խնդրելով որոշել ՀՀ քրեական օրենսգրքի 353.1-րդ հոդվածի և դրա հետ փոխկապակցված՝ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը:

Դատարանի դիրքորոշմամբ՝ Դատարանում քննվող թիվ ԿԴ/0014/01/19 քրեական գործով կիրառման ենթակա վերը նշված դրույթների սահմանադրականությունը կասկած է հարուցում:

Դատարանը գտնում է, որ դրանք հակասում են ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածով սահմանված անձի սեփականության սահմանադրական իրավունքին: Մասնավորապես, վերլուծելով սեփականության հիմնական իրավունքի բովանդակությունը միջազգային փաստաթղթերի, եվրոպական դատարանի դատական նախադեպերի, ՀՀ Սահմանադրության և ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Դատարանը պնդում է, որ բոլոր այն դեպքերում, երբ ոստիկանության իրավասու ծառայողի՝ անհետաձգելի միջամտության որոշմամբ ընտանիքում ենթադրաբար բռնություն գործադրած անձին հարկադրվում է հեռանալ բռնության ենթարկվածի բնակության տարածքից (որը միաժամանակ հանդիսանում է բռնություն գործադրած անձին սեփականության իրավունքով պատկանող բնակարանը) կամ ենթադրաբար բռնություն գործադրած անձին արգելվում է որոշակի հեռավորությունից ավելի մոտենալ բռնության ենթարկվածին (ով շարունակում է բնակվել բռնություն գործադրած անձին

սեփականության իրավունքով պատկանող բնակարանում), տեղի է ունենում միջամտություն անձի սեփականության իրավունքին:

Քննարկված իրավիճակում, ըստ Դատարանի, անձը փաստացի զրկվում է իր սեփականության իրավունքի անքակտելի մասը կազմող՝ գույքի օգտագործման իրավունքից:

Դատարանի գնահատմամբ՝ վերոգրյալը ոչ այլ ինչ է, քան անձին սեփականության իրավունքից զրկում, որն օրենքի գործող կարգավորումների պայմաններում կիրառվում է ոստիկանության ծառայողի կողմից այն դեպքում, երբ ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 4-րդ մասն անվերապահորեն նախատեսել է, որ անձը սեփականությունից կարող է զրկվել բացառապես դատական կարգով:

Դատարանի կարծիքով՝ նույնիսկ այն պայմաններում, եթե արձանագրվի, որ անհետաձգելի միջամտության քննարկվող որոշումներով տեղի է ունենում ոչ թե անձի սեփականության իրավունքից զրկում, այլ սահմանափակում, ըստ Դատարանի, նման միջամտությունը չի կարող համարվել իրավաչափ այնքանով, որքանով սահմանված չեն գործուն երաշխիքներ սեփականության իրավունքի արդարացված սահմանափակման համար, այդ թվում՝ ապահովված չէ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրացման հնարավորությունը, նախատեսված չեն կառուցակարգեր, որոնցով կապահովվի որոշակի տարածքում անձի բնակվելու հնարավորությունը, ինչի հետևանքով քննարկվող միջամտությունը դառնում է անհամաչափ:

Ելնելով վերոգրյալից՝ Դատարանը խնդրել է ՀՀ քրեական օրենսգրքի 353.1 հոդվածի և դրա հետ փոխկապակցված՝ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը ճանաչել ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածին հակասող և անվավեր:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Սույն գործով սահմանադրական վեճի առարկան կազմող դրույթների բովանդակությունը հետևյալն է.

ՀՀ քրեական օրենսգրքի 353.1-րդ հոդվածի համաձայն **(Անհետաձգելի միջամտության որոշումը կամ պաշտպանական որոշումը դիտավորությամբ չկատարելը)՝**

1. «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 1-4-րդ կետերով, ինչպես նաև 8-րդ հոդվածի 5-րդ մասի

1-4-րդ կետերով նախատեսված պահանջները ընտանիքում բռնություն գործադրած անձի կողմից դիտավորությամբ չկատարելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը վեց ամիս ժամկետով:

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի **(Անհետաձգելի միջամտության որոշումը)** 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերի համաձայն՝

3. Անհետաձգելի միջամտության որոշմամբ կարող են կիրառվել հետևյալ սահմանափակումները.

1) հարկադրել ընտանիքում բռնություն գործադրած անձին անհապաղ հեռանալ ընտանիքում բռնության ենթարկվածի բնակության տարածքից և արգելել այդտեղ նրա վերադարձը մինչև որոշմամբ սահմանված ժամկետի լրանալը. (...)

3) արգելել ընտանիքում բռնություն գործադրած անձին այնպիսի հեռավորությունից ավելի մոտենալ ընտանիքում բռնության ենթարկվածին (անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ եղող անձանց), որն ընտանիքում բռնության ենթարկված անձի մեջ ողջամտորեն հիմնավոր վախ կհարուցի իր անձնական անվտանգությանը սպառնացող վտանգի մասին: Այս սահմանափակումը կիրառելիս որոշմամբ սահմանվում է հեռավորության կոնկրետ չափը (...):

Հարկ է նշել նաև, որ օրենքի նույն հոդվածի 1-ին մասում օրենսդիրն անհետաձգելի միջամտության որոշում կայացնելու իրավունք է վերապահել ոստիկանության իրավասու ծառայողին:

Վիճարկվող դրույթներն անհրաժեշտ է դիտարկել սահմանադրությամբ սահմանված սեփականության հիմնական իրավունքին համապատասխանության գնահատման տեսանկյունից:

Սեփականության սահմանադրական իրավունքն ամրագրված է ՀՀ Սահմանադրության (2015 թ. խմբ.) 60-րդ հոդվածում:

Հոդված 60. Սեփականության իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

(...)

3. Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

4. Ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի:

(…)

Սեփականության իրավունքի տարրերը հանդիսացող տիրապետման, օգտագործման, տնօրինման քաղաքացիաիրավական իրավազորությունների բովանդակությունը բացահայտված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածում, համաձայն որի՝

Տիրապետման իրավունքը գույքը փաստացի տիրապետելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է:

Օգտագործման իրավունքը գույքից դրա օգտակար բնական հատկությունները քաղելու, ինչպես նաև դրանից օգուտ ստանալու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է: Օգուտը կարող է լինել եկամտի, պտուղների, աճի, ծնաճի և այլ ձևերով:

Տնօրինման իրավունքը գույքի ճակատագիրը որոշելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է: Այլ կերպ կարելի է ասել, որ տնօրինման իրավունքը սեփականատիրոջ կողմից գույքի նկատմամբ իրավահարաբերություններ առաջացնելու, փոփոխելու կամ դադարեցնելու հնարավորությունն է:

Սեփականության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությանն իր մի շարք որոշումներում անդրադարձել է նաև ՀՀ սահմանադրական դատարանը: Վերջինիս իր որոշումներում արձանագրել է, որ ճանաչելով և երաշխավորելով սեփականության իրավունքը՝ պետությունը միաժամանակ նախատեսել է սեփականության իրավունքի սահմանափակման հնարավորություն:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը 2012թ. փետրվարի 24-ի ՍԴՈ-1009 որոշման մեջ արձանագրել է. «Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությամբ սեփականության իրավունքը ճանաչելով որպես յուրաքանչյուրի հիմնական իրավունք, բացահայտվում է այդ իրավունքի բովանդակությունը, այն է՝ իր սեփականությունը տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իրավազորությունները՝ միաժամանակ որպես դրանց իրացման նախապայման սահմանելով **սեփականատիրոջ հայեցողությունը:** Սահմանադրական այս նորմում «իր հայեցողությամբ» ձևակերպման շեշտադրմամբ սեփականության իրավունքի իրացման հիմքում դրվել է սեփականատիրոջ հստակ արտահայտված կամքը, վերջինս դիտարկվում է որպես սեփականության իրավունքի իրացման պարտադիր

նախապայման, և սեփականության իրացման գործընթացում վճռորոշ դերակատարություն է հաղորդվում անձի կամաարտահայտությանը: Այս դրույթի բովանդակությունը հանգում է նրան, որ գույքային իրավունքների իրացումը պետք է իրականացվի սեփականության անձեռնմխելիության և պայմանագրային ազատության սկզբունքների հիման վրա, որոնք ենթադրում են, ի թիվս այլնի, **քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակիցների կամքի ինքնավարություն և գույքային ինքնուրույնություն»:**

Սույն գործի հանգամանքներով, փաստորեն, գործող իրավակարգավորումների պայմաններում դրանց իրավակիրառումը կարող է հանգեցնել անձի սեփականության իրավունքի սահմանափակման:

Ճիշտ է, վիճարկվող դրույթներն անմիջականորեն ուղղված չեն անձի սեփականության իրավունքի սահմանափակմանը, սակայն դրանց իրավակիրառման արդյունքում սահմանափակվում է ընտանիքում բռնություն գործադրած անձի՝ իր հայեցողությամբ իր սեփականությունը հանդիսացող բնակելի տարածությունն օգտագործելու իրավունքն այնքանով, որքանով վերջինիս հարկադրվում է անհապաղ հեռանալ ընտանիքում բռնության ենթարկվածի բնակության տարածքից (այդ թվում նաև՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող բնակարանից) և արգելել այդտեղ նրա վերադարձը մինչև որոշմամբ սահմանված ժամկետի լրանալը:

Նույն կերպ, անձը զրկվում է իր հետ համատեղ բնակվող բռնության ենթարկված անձի հետ իրեն սեփականության իրավունքով պատկանող նույն բնակության վայրում համատեղ բնակվելու (գտնվելու) իրավունքից՝ ոստիկանության ծառայողի կողմից նրան որոշակի տարածությունից ավելի մոտենալու արգելքի մասին որոշում կայացնելու դեպքում:

Այսինքն՝ նկարագրված իրավիճակներում անձի սեփականության իրավունքի բաղադրատարրը հանդիսացող օգտագործման իրավունքը սահմանափակվում է: Այդ պարագայում ծագում է նման սահմանափակման իրավաչափության և սահմանադրությանը համապատասխանության խնդիրը:

ՀՀ սահմանադրական դատարանն իր 13.07.2010 թվականի ՍԴՈ-903 որոշման մեջ արտահայտել է իր դիրքորոշումն առ այն, որ «ՀՀ Սահմանադրության (2005թ. խմբ.) 31-րդ հոդվածը նախատեսում է **սեփականության իրավունքի իրականացման սահմանափակման** միմյանցից տարանջատվող չորս հանգամանք՝

ա) սեփականության իրավունքի իրականացման սահմանափակում՝ շրջակա միջավայրին վնաս պատճառելու, այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը խախտելու արգելքով (31-րդ հոդվ. 1-ին մասի երկրորդ նախադասություն),

բ) սեփականազրկում (31-րդ հոդվ. 2-րդ մաս),

գ) սեփականության հարկադիր օտարում հասարակության և պետության կարիքների համար (31-րդ հոդվ. 3-րդ մաս),

դ) հողի սեփականության իրավունքի սահմանափակում՝ օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար:

Ինչպես հետևում է նշված ա) ենթակետի բովանդակությունից, սեփականության իրավունքի իրականացումը սահմանադիրը կաշկանդում է որոշակի հանրային արժեքներ պահպանելու պահանջով: Դրանք են. շրջակա միջավայրը, **այլ անձանց**, հանրության և պետության իրավունքները և օրինական շահերը: Նման մոտեցումը կոչված է ապահովելու սեփականատիրոջ և այլոց իրավունքների ու հանրային շահերի միջև ողջամիտ հավասարակշռություն՝ գույքի նկատմամբ անձի սեփականության իրավունքի իրականացումը ճանաչելով երաշխավորված, սակայն ոչ բացարձակ»:

Այս համատեքստում քննարկման առարկա պետք է դարձնել հատկապես վիճարկվող դրույթների համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության (2015թ.) 60-րդ հոդվածի 3-րդ մասին: Նշված սահմանադրական նորմի առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանը 2017թ. հունվարի 31-ի ՍԴՈ-1340 որոշման մեջ արձանագրել է.

«… սահմանադիրը որոշակի դեպքերում և նպատակներով պայմանավորված՝ հնարավոր է համարում միջամտություն սեփականության իրավունքին նաև այն դեպքում, երբ նույնիսկ սեփականությունը ձեռք է բերվել օրինական հիմքով: Մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասն ամրագրում է սեփականության իրավունքի սահմանափակման հնարավորություն, ըստ որի՝

- սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով, որից բխում է, որ օրենքը պետք է բավարարի իրավական օրենքին ներկայացվող՝ Սահմանադրական դատարանի որոշումներում բազմիցս արտացոլված, պահանջները,

- սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով,

- սեփականության իրավունքի սահմանափակումը պետք է համապատասխանի որոշակիության և համաչափության սահմանադրական սկզբունքներին և չի կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները»:

Վիճարկվող դրույթների սահմանադրականությունն անհրաժեշտ է գնահատել վերը շարադրված մեկնաբանությունների լույսի ներքո:

Այսպես, ինչպես արդեն նշել ենք, ըստ օրենքի վիճարկվող դրույթի՝ ոստիկանության իրավասու ծառայողի կողմից կայացված անհետաձգելի միջամտության որոշմամբ, ըստ էության, կարող է սեփականատիրոջ կամքին և համաձայնությանը հակառակ

սահմանափակվել վերջինիս սեփականության իրավունքն իր բնակելի տարածության նկատմամբ, մասնավորապես, օգտագործման՝ այնտեղ բնակվելու իրավունքը: Այսինքն, սեփականության իրավունքի քննարկվող սահմանափակումն ըստ էության սահմանված է **օրենքով:** Ընդ որում, նման սահմանափակումն ուղղված է այլ անձանց՝ ընտանիքում բռնության ենթարկված անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը: Այսինքն՝ բռնություն գործադրած անձի սեփականության իրավունքի սահմանափակումը, ի թիվս այլնի, հետապնդում է **այլ անձանց կյանքի և առողջության պահպանման նպատակ:**

Ընդ որում, այդ նպատակն անմիջականորեն ամրագրված է վիճարկվող՝ «Ընտանիքում բռնության կանխարգելման … մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածում, որի 1-ին մասի համաձայն՝

1. Եթե ընտանիքի մեկ անդամը մյուսի նկատմամբ բռնություն է կիրառել, և առկա է հիմնավոր ենթադրություն բռնության կրկնման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգի մասին, ապա ընտանիքի մյուս անդամի կյանքի և առողջության ապահովման նպատակով ոստիկանության իրավասու ծառայողն անհապաղ կայացնում է անհետաձգելի միջամտության որոշում: (…)»:

Ինչպես արդեն նշել ենք, համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշման սեփականության իրավունքի սահմանափակումը պետք է համապատասխանի որոշակիության և համաչափության սահմանադրական սկզբունքներին և չի կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները:

Հոդված 78. Համաչափության սկզբունք

Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Հոդված 79. Որոշակիության սկզբունքը

Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Համաձայն ՀՀ Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները չպետք է խաթարեն ողջամիտ հավասարակշռությունը հետապնդվող նպատակի և այդ նպատակին հասնելու համար օգտագործված միջոցի միջև[1]:

Օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները[2]:

Կարծում ենք, վիճարկվող դրույթների ուժով անձի սեփականության իրավունքին պետության միջամտությունը չի կարող համարվել իրավաչափ վիճարկվող դրույթների՝ իրավական որոշակիության և համաչափության սկզբունքներին չհամապատասխանելու հիմքով: Իրավական որոշակիության տեսանկյունից «Ընտանիքում բռնության կանխարգելման ... մասին» ՀՀ օրենքի վիճարկվող դրույթներում չի որոշակիացվում բնակության տարածքի սեփականության սուբյեկտը: Այսինքն՝ քննարկվող դրույթները նախատեսում են բռնություն գործադրողի՝ իր բնակության տարածքը լքելու և այնտեղ չվերադառնալու պարտականություն՝ անտեսելով իր սեփականությունն իր հայեցողությամբ օգտագործելու անձի իրավունքը:

Քննարկվող դրույթներով չի ապահովվում անձի իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր (ՀՀ Սահմ., հոդվ. 75): Բանն այն է, որ օրենսդրությամբ սահմանված չեն գործուն երաշխիքներ սեփականության իրավունքի արդարացված սահմանափակման համար, այդ թվում՝ ապահովված չէ արդյունավետ դատական պատպանության իրավունքի իրացման հնարավորությունը, նախատեսված չեն կառուցակարգեր, որոնցով կապահովվի որոշակի՝ փոխարինող տարածքում անձի բնակվելու հնարավորությունն այն ժամանակահատվածում, երբ անձը հարկադրաբար հեռացված է իր բնակության տարածքից: Նման պայմաններում, կարծում ենք, վիճարկվող դրույթներով նախատեսված միջամտությունը դառնում է անհամաչափ:

Հարկ է նկատել նաև, որ ՀՀ քրեական օրենգսրքի վիճարկվող 353.1 հոդվածը նախատեսված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին 183-րդ հոդվածում (տուժողի բողոքի հիման վրա հարուցվող քրեական գործերը) թվարկված հանցակազմերի շարքում որպես մասնավոր մեղադրանքի գործ: Ստացվում է, որ բռնություն գործադրած և իր բնակության վայրից հարկադրաբար հեռացված անձը, նույնիսկ եթե հաշտվի բռնության ենթարկվածի հետ և վերադառնա իր բնակության վայր, միևնույնն է, կենթարկվի քրեական պատասխանատվության: Մինչդեռ, կարծում ենք, հիմնական

---

[1] Մասնրամասն տե՛ս, օրինակ, ՀՀ սահմանադրական դատարանի 23.02.2016 թիվ ՍԴՈ-1256, 12.07.2016 թիվ ՍԴՈ-1293 որոշումները:

[2] ՀՀ սահմանդրական դատարանի 02.04.2014թ. թիվ ՍԴՈ-1142 որոշումը:

իրավունքների և ազատությունների իրականացման գործուն կառուցակարգեր սահմանելու պետության պարտականությունը պահանջում էր, որ ՀՀ քրեական օրենսգրքում նախատեսվեր խրախուսող նորմ ընտանիքում բռնություն գործադրած այն անձանց քրեական պատասխանատվությունից ազատելու վերաբերյալ, որոնք հաշտվել էին բռնության ենթարկված անձանց հետ:

Այսպիսով, վերը նշված հիմնավորումներով, կարծում ենք, բնակելի տարածության նկատմամբ սեփականության իրավունքի հարկադիր սահմանափակումը՝ որպես այլ անձանց կյանքի և առողջության պաշտպանության նպատակին հասնելու միջոց, որոշակի և համաչափ չէ և անմիջականորեն հանգեցնում է անձի սեփականության սահմանադրական իրավունքի խախտման:

Ելնելով վերոգրյալից՝ կարծում ենք, որ.

- **ՀՀ քրեական օրենսգրքի 353.1-ին հոդվածի և դրա հետ փոխկապակցված՝ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը խնդրահարույց է:**

Համակարգող՝

Լյուդվիկ Դավթյան